



Ե/ՕԳ.Բ/ԳՅԿԲԿ-2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1022 -Ա

«16» 08 2021թ.

ք.երևան

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի N737-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N740-Լ որոշմամբ հաստատված Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում պետական պաշտոններ զբաղեցնող, այդ թվում՝ փրկարարական ծառայողների, քաղաքացիական ծառայողների, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց (այսուհետ՝ ԱԻՆ աշխատողներ) տալ պարգևատրում ծառայողական գործունեության կամ հատուկ առաջադրանքների որակյալ աշխատանքների կատարման համար:

2. ԱԻՆ աշխատողներին հատուկ առաջադրանքների կամ որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրել անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ

օրենսդրությամբ համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով և չափերով:

3. Սահմանել, որ ԱԻՆ աշխատողների նկատմամբ պարգևատրում չի կիրառվում հետևյալ դեպքերում.

1) օրենսդրությամբ սահմանված կարգով՝

ա. թեթև կարգապահական տույժ ստացած աշխատողի նկատմամբ՝ տույժ ստանալու ամսվա և հաջորդ 2 ամիսների համար,

բ. խիստ կարգապահական տույժ ստացած աշխատողի նկատմամբ՝ տույժ ստանալու ամսվա և հաջորդ 5 ամիսների համար.

2) ԱԻՆ աշխատողների ժամանակավոր անաշխատունակության հետևանքով առնվազն 10 օրից ավել աշխատանքի չներկայանալու դեպքում՝ տվյալ ամսվա համար.

3) առնվազն 10 օրից ավել ամենամյա, լրացուցիչ և չվճարվող արձակուրդի մեջ գտնվելու դեպքում՝ տվյալ ամսվա համար.

4) աշխատանքի նոր ընդունվածներին՝ տվյալ ամսվա և հաջորդ 1 ամսվա համար.

5) փորձաշրջանում գտնվելու ողջ ժամանակահատվածում:

4. ԱԻՆ կառուցվածքային ստորաբաժանումների և Պետական ռեզերվների գրասենյակի ղեկավարներին, Փրկարար ծառայության տնօրենին՝ յուրաքանչյուր ամսվա 25-ին աշխատաժամանակի տեղեկագրի հետ միասին ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն ներկայացնել նաև սույն հրամանի 3-րդ կետով սահմանված դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2021 թվականի սեպտեմբերի մեկից:

16.08.2021

X *Արմենակ Փիլոյան*

ԱՆԴՐԱՆԻԿ ՓՈՒՈՅԱՆ

Signed by: PILOYAN ANDRANIK 2408620155

Ա. ՓԻՒՈՅԱՆ